

ԲԱԺՆԵԳԻՆ

ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 ղր
Վեցամս 25 "

ԱՐՏԱՍԱՀԱՐՆ
Տարեկ. 13 ֆր
Վեցամս. 7 "

ԱՍԻՐԻԿԱ
2 ՏՂ. 30 սէնդ
ԿԱՆԻՍԻԿ

Թիւր 1 Ղրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն տրուիր

Դասնուցումներ
մասնաւոր պայ
մաններով

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ԳԵԿՏԵՄ. 17 ՀԻՆԳՇԱԲԹԻ 1903

ԹԻԻ 286

ԿԱՂԱՆԴԻ ԱՌԹԻԻ

Մայր Հայաստանի, Լեւոն Չոքի շիրիմի եւ Մեծիկ Վարդանայ պատկերները ընտիր քարթո-նի վրայ տպագրուած՝ իբր քառթ-քօւթ կը ծախուին թէ՛ մեր խմբագրատունը եւ թէ՛ Շէրիֆ բաշա փողոց Տիար Կարապետ Աստուածատուրի մօտ: 12 հատին գինն է 2 գհկն. ողջ. իսկ Եգիպտական քաղաքներու համար քօւթի ծախքով 100 բարա. արտասահման 60 սանդիմ. Յանձնարարութիւնը կը կատարուին կանխիկ վճարումով: Դրամի փոխարէն նամակագրօջմ ալ կրնդունոյի: Կը ծախուի նաեւ ի Վառնա Պ. Սրմենակ Տ. Փափագեանի մօտ, հատը 5 սանդիմ:

ԱԶԳԱՅԻՆ

Կայրուածական խնդիրը

Ս. Էջմիածինէն Պատրիարքարան հասրը է հետաագիր մը սա սլարունակութեամբ. «Պատասխանը ժխտական է»: Կը կարծենք թէ ուրիշ պաշտօնական հեռագիրն ալ կուգայ հերքել կալուածները ետ դարձնելու մասին հրապարակ նետուած մտացածին լուրը:

—Պաթումէն Հայաքերթի զրկուած թղթակցութիւն մը իրաւամբ կը մեղադրէ Էջմիածնայ

միարանութիւնը, նախ որ մինակ թողտը է կորովի Կաթողիկոսը, յաջո կառավարութեան գէշ շերենալու նպատակաւ, երկրորդ որ Ռաֆաի հըրատարակութենէն ետքը՝ Կաթողիկոս և Միաբանութիւն Գանձարանին մէջ կէս միլիոն ռուպլի հնչուն դրամ պահելու միամտութիւնն ունեցած են, մինչդեռ շատ դիւրաւ կարելի է եղեր փոխադրել զայն եւրոպական ու և է հրապարակ:

—Կայրուածական խնդրոյն պատճառաւ նահատակուող մեր ռուսահայ եղբայրներուն համար Պուլկարիոյ և Ռումանիոյ հայաշատ մէկ քանի քաղաքաց մէջ հողահանդատեան պաշտօն կատարուեր է:

—Սազունին և ուրիշ երկու հայերը սպաննող Եօրկի Եանքին (կեղծ անուն) որ ինքնասպան ալ եղաւ, Խարբերդցի Տիգրան Թիրախեան առունով մէկն է եղեր:

—Ծանօթ հայերէնագիրտ բաղմարդիւն Հայր Մատաթիա Գորագաշեան, որ տտենէ մը իվեր Պոլիս Բերայի Ս. Յակոբայ անկեղանոցին մէջ հիւանդ պառկած էր, դեկ 3 հինգ շաբթի վախճաներ է, Յուդարկաւորութեան հոնդէսը կատարուեր է վարդապետական կարգով:

—Նոյնպէս Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան անդամներէն Հ. Մանուէլ Վ. Քաջունի նոյ. 31ին վախճանած ըլլալով ի Պոլիս, մարմինը զմուռներ է՝ ըստ իւր փափագի ի Վենետիկ Ս. Ղաղար փոխադրուելու համար:

Հանգիստ իրենց ոսկորներուն:

—Սեւանիկի մէջ կառուցանելի Հայ եկեղեցիին հիմնարկեքը նոյ 15ին կատարուեր է:

—Քաղաքիս բնակիչներէն Մեծ. Տիարք Ժա. մակոչեան եղբարք Վարազայ որբանոցին համար 1000 ֆրանք դրկեր են Ազգ. Պատրիարքարան:

—Փոհու թեամբ կը ծանուցանենք թէ տեղւոյս Խառն դատարանի մէջ, հանդուցեալ կարապետ Պէյ Բէիզեանի ունեցած Առաջին Խորհրդականի պաշտօնը այս անգամ իւր եղբոր՝ Վսեմ. Յարութիւն Պէյ Բէիզեանի յանձնուած է:

—Կը լսենք թէ քաղաքիս ծանօթ վաճառականներէն Տիար Արիստակէս Ղաչարեան՝ յառաջիկայ Ս. Մենդեան տօնի առթիւ տալիք այցելութիւններէն զերծ մնալու համար 10 ֆրանք նուիրած է Զէյթունի Բարեսիրացիին:

Փափագելի է որ Եգիպտոսի համար նսրեղող սոյնօրինակ նուիրատուութիւնն ալ իրեն հետեւողներն ունենայ:

—Ս. Էջմիածնի կարող անդամներէն Կարապետ Վ. Տէր Մկրտիչեան՝ Երեւանայ առժ. առաջնորդ կարգուած է Սուքիաս արքեպ. Պարզեմեցի տեղ, որ ինչպէս կը յիշեն ընթերցողք Օրէնպուրկ աքսորուած է կալուածական խնդրոյն առթիւ:

Զիթճեանի եւ Միսոյի սպանութեան վերաբերեալ պաշտօնակոն թուղթերը Օտեսայէն եւ Փօթիէն Ռուսնուքի հարցաքննիչ դատաւորին ղրկուեր են, ուր մէկ քանի ազգայիներ կանչուելով, պահանջուած տեղեկութիւնները առնուեր են:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Փեղբոսպուրկէ կը ծանուցանեն թէ Ռուսիոյ եւ Ճաբոնի միջեւ կատարուած բանակցութիւնները երկիւղալից հանգամանք մը առած են: Զըրոյց կը պտտի թէ ծովակալ Ալէքսիէվ կ'ուզէ ըսկսիլ զինուորական գործողութիւնները, բայց արտաքին գործերու եւ պատերազմական նախարարները բռն կերպով կը հակառակին:

—Անգլիա կը պատրաստուի Թէպէթի վրայ արշաւախումբ մը զրկել, որուն հրամանատարութիւնը պիտի յանձնուի Զինաստանի մէջ դաշնակից զօրքերուն հետ գտնուող Գնդապետ Մաքսոնալտի:

—Բարիպէն՝ լաւատեղեակ աղբիւրէ մը կը հաւաստուի թէ, Անգլիոյ նախաձեռնութեամբ կը խորհուի միջազգային դեսպանախորհուրդ մը գումարել, վերջնապէս կարգադրելու համար ամբողջ արեւելեան խնդիրը:

—Անգլիոյ նախարարաց խորհուրդը որոշեց երկու միլիոն սգերին յատկացնել Սուաքիմէն Պէրպէր երկաթուղի մը շինելու համար:

—Պուլկարիոյ հանգուցեալ Իշխան Աղեքսանդր Պաթէնպէրկի կնքեալ մէկ գրութիւնը այսօրեւ երեւան ելեր է, որուն մէջ իշխանը կը զգուշացնէ Պուլկար ժողովուրդը Ռուս կառավարութեան էնթրիքներէն և կ'առաջարկէ որչափ որ կարելի է հեռանալ անկէ:

—Անգլիոյ կառավարութիւնը առաջարկած է Բ. Դրան որ Մակեդոնիոյ մէջ պաշտօնի կոչուելիք օտար սպաններու շարքին մէջ Անգլիացի սպաններ ալ գտնուին: Դուռը թէեւ խուսափողական պատասխան մը տուեր է, բայց պէտք է ի նկատի առնել թէ՛ Անգլիայէն կուգայ առաջարկը, որ վերջ ի վերջոյ անպատճառ կը գործադրուի:

—Ռուսիոյ արտաքին գործոց նախարարին խօսքին նայելով, իր կառավարութիւնը կը փափագի եղեր Մակեդոնիոյ կառավարիչ տեսնել կըրէտէի Եօրկիոս իշխանը:

(Եթէ Ռուսիա առանկ առաջարկ մը բերէ, (թող որ չընդունիր) Պորկարիոյ մէջ ունեցած գիրքը վայրկենապէս կը կորսնցէ):

—Անգլիոյ թագուհին անցեալ շաբթու քիչ մնացած է որ զոյ երթայ ելեքտրական լամբարի մը բռնկելէն: Իր ննջասենեակին տակի յարկը պառկող օրիորդ մը գիշերուան ժամը Յին յանկարծ կ'արթննայ թանձր մուխէ մը որով սենեակը լեցուած էր. անմիջապէս վեր կ'ելլէ թագուհիէն կ'արթնցնէ, և երկուքը մեկտեղ գիշե-

րանոցներով, հազիւ թէ սանդուխները իջած էին, ահա թագուհւոյն ննջասենեակը կը փլչի:

Նոյն գիշերը ն. Վեհ. էտուար թագաւորը լորտի մը ապարանքը հրաւիրուած է եղեր: Թագուհին անմիջապէս հեռագրած է ն. Վեհափետու թեան իւր աղատումը:

ՁԱՆԱՁԱՆՔ

Ծրար մը մարգարիտ. — Կ. Պոլսէն Վիեննա՝ գոհարէղեններու վաճառական «Մարքս Մէնասէ»-ի անուամբ զրկուած 15 հազար քորոն արժողութեամբ ծրար մը մարգարիտ՝ Վիեննայի նամակատան մէջ կորսուելու է: Գոհարէղենները «ռքոմանտէ» եղած էին թէև, բայց Աւստրիական նամակատունը ըստ օրինի 50 քորոն պիտի հատուցանէ: Աւստր. Թղթատարական վերատեսչութիւնը՝ Կ. Պոլսոյ նամակատունէն հեռագրաւ հարցուցած է թէ՝ զրկուած առարկաները ապահովագրուած էին թէ ոչ:

Ամենեւն պզտիկ Օրաքերքը. — Հոկտ. 20էն ի վեր Բարիդի մէջ կը հրատարակուի լրագիր մը, «Քառթ-Ժուռնալ», որ ճիշդ պատկերազարդ քառթ-բօսթալի մը մեծութիւնը ունի: Պատկերը կը ներկայացնէ օրուան կարևոր դէպքը, եւ տակը պարապ մնացած պղտիկ տեղին մէջ քանի մը տողով կ'ամփոփուին օրուան կարևոր լուերը: «Քառթ-Ժուռնալ» ամէն օր կ'անոնտուրապէս կը զրկուի բաժանորդներուն, ճիշդ գործի մարդու լրարկին է «Քառթ-Ժուռնալ» որովհետև օրուան ամենէն կարևոր լուերուն համար միայն տեղ ունի:

Ամենեւն հագուազիտ լրագիրը Գերման Կայսեր՝ Վիլհելմ Բ. ին լրագիրն է, որ երկու օրինակէ աւելի չը տպագրուիր:

Երկու ձեռնհաս քարտուղարներու կողմանէ խմբագրուած այս թերթը կը պատրաստուի բոլոր մեծ լրագիրներէ կտրուած այն կտորներէն, որոնք կը խօսին զանազան ազգիւր կացութեան վրայ:

Թերթը կը տպուի մեծ օրագիրներու հասնելէն գրեթէ երկու ժամ վերջը: Օրինակներէն մէկը կայսեր կը մատուցուի, իսկ միւսը գրատան կը յանձնուի, արձանագրութեանց հետ մէկտեղ

պահուելու համար:

Հարկ չը կայ ըսելու թէ այս լրագիրը որոշ բաժանորդ ունի եւ ոչ ալ ընթերցող, շատ սուղի կը նստի . . . կայսերական անձնական գանձուն:

ՏԳԵՂ ԲԱՐՔԵՐ

ՀԱՅՐԱՏԵԱՅ ՄԸ

Ասկէ գրեթէ տասը տարի առաջ Տ. . . ցի երիասարդ մը Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը կը հաստատուի ու բախդին բերմամբը գործին մէջ բաւական կը յաջողի: Իւր ծննդավայրը թողուցած հայրը՝ որդւոյն կարօտէն տոջորուելով, — և ո՛ր հայր չի տոջորուիր իր սիրական զաւկէն տարիներով հեռու մնալով. — կ'որոշէ անգամ մը դալ իւր զաւակը գրկել. ուստի ճամբայ կ'ելնէ ու հաջորումէկ գժուարութիւններու յաղթելով կը յաջողի վերջապէս ինքզինքը Աղեքսանդրիոյ նաւահանգիստը նետել, եւ պանդոկի մը հայ ներկայացուցիչին միջոցաւ իր գալուստը իմացընել զաւկին:

Երախտագէտ որդին պանդոկին բակին մէջ երբ կը տեսնէ իր ալեզարդ հայրը որ Յակոբ Նահապետին պէս թեքերը բացած զինքը գրկել կը վազէր, ձեռքովը արգելք ըլլալով անոր գորովին, կը . . . յանդիմանէ և կը նախառէ զայն այս յանգձնութեանը համար, միանգամայն կը հրամայէ և կ'սպառնայ գտնուած պանդոկէն դուրս չելլել մինչեւ երկու օր, որպէս զի առաջին մեկնելիք շոգենաւով նորէն իր տեղը վերադառնայ: Վասնզի ինքը հարուստ վաճառականի մը աղջիկը կընութեան առնելու որոշումը տուած ըլլալով, հօրը ներկայութիւնը կամ ելնալ հայր մը ունեցած ըլլալը իր պատուոյն արատ ու ամուսնութեանը արգելք կըլլայ եղեր (?):

Եւ իրօք երկու օր վերջը, լալէն աչքերը ուռեցած խեղճ հայրը շոգենաւ դրուելով ճամբայ հանուեցաւ:

Բոժ. — Այսօրինակ փեսաձու զաւակը ինչ ածականով օժտելն ալ ընթերցողին թողուեցաւ:

Իրագեկ

ՄԱՍԿԵՐԻ ԹԵ՛ ԲՈՒՄԱԿԵՐ

Ֆրանսական լուրջ հանդեսի մը մէջ, երիտա-
սարդ գիտուն մը շահեկան յօդուած մը հրատա-
րակած է, որով բուսակերութիւնը կը ջատագովէ:

Տենդային գերազուրիւնէսութեան և կատա-
ղի մրցման այս ժամանակներս, կըսէ՝ ան, վերջ-
նակտն յաղթանակը կը տանի ամենէն կորովի և
ամենէն գիմացկուն մարդը՝ որ կրնայ «պոպաու-
ետայ կազմուածք» մը ի սպաս դնել «երկաթէ կամ-
քի մը»:

Յեղի մը գիշերակութիւնն, առուգութիւնն ու
բտրդաւածութիւնը միշտ համեմատական է ա՛յն հո-
գածութեան, զոր ինք (ցեղը) կընէ ամենազուտ
բուսակային կենցուղիի մը հետեւելու համար: Ինչ
դեռ, ընդհակառակը, այն ցեղերը որ միայն ձի-
նակեր, մսակեր ու գիշակեր են, մարդկութեան
ամենայնոքին աստիճանին մէջ կը մնան կամ կըյ-
նան:

Հին ժողովուրդները գրեթէ միս չէին ու-
տեր: Չինացիք և Եգիպտացիք բոյսերով և պը-
տուղներով կը սնանէին: Նախնի ժամանակնե-
րու ըմբիշները միմիայն թուզով, ընկուզով, պա-
նիր ու հացով և «մաշառ» կը բաւականանային:
Սպարդացիներուն սեւ շիկաթանը առասպելական
դարձած է: Յոյները՝ բուսական ըլլալով՝ «Սալա-
մինէ»ի և «Մարաթոն»ի ճակատամարտները չա-
հեցան: Պիւթագորոսի աշակերտները՝ թուզ, պա-
նիր, բանջարեղէն մեղր ու հաց կուտէին: Պլա-
տոն, իր իտէալ Հանրապետութեանմէջ միտք կար
գիլէր քաղաքացիներուն, և ինք՝ մեծ փիլիսոփան՝
ժուժկալութեան օրինակ կը հանդիսանար՝ պտուղ
միայն ուտելով:

Եկեղեցական Հայրերը, Յովհան Ոսկերեբոն,
Օգոստինոս, Եւայլն, մօին գէժ կը խօսէին:

Վոլթէռ հեգնութեամբ կը խօսի մօին նող-
կալի հոտին վրայ: Բասքալ, Նիւթըն, Տիտուս, Ռու-
սօ, Միշլէ, Ֆրանքլին, Լամաութին կը հարցը-
նեն թէ ինչո՞ւ մարդոց ձեռքով ա՛յնքան կենդա-
նիւններու արխն կը թափի:

Քիւլիէ եւ այլ հոյակապ գիտուններ կը հա-
տատեն թէ մարդը սակեցնուած է պտուղներով,
արմատներ, սվ եւ բոյսերու այլ և այլ հիւթեղ մա-
սերով սնանելու համար, թէ մարդը կազմուած
է միմիայն բուսային կենցուղիի (ռէժիմ) հետե-

ւելու համար: Թէ առողջութեան եւ ախտաբու-
ժութեան բո՛ւն հիմը՝ բուսային կենցուղին է:

* * *

Սնունդներն երկու մասի կը բաժնուին, 1)
մարմոյն կոբուստները դարմանող սնունդներ,
եւ 2) մարմնոյն ուժը նորոգող սնունդներ:

Առաջինները ազոթով հարուստ են. ասոնց
մէջ կը գտնուին հաւկիթին ճերմկուցը, կաթին
«ալպիւմին»ները. շանաղան բանջարեղէններ,
միս եւ արխն:

Երկրորդ տեսակի սնունդները՝ մարդու կազ-
մուածքին մէջ թթուածինին հետ կայրին եւ «կի-
զանուտ գոյացութիւններ» կը կոչուին: Ասոնց-
մէ են շաքարուտ նիւթերը, ճարպերը, ամէն
տեսակ իւղերը եւ կարագները, ալիւրախառն
կամ նշատեսակ նիւթերը:

Այս երկու տեսակ սնունդներուն վրայ պէտք
է աւելցնել նաեւ ջուրը եւ քանի մը անհրա-
ժեշտ հանքայիններ, ինչպէս՝ աղը, երկաթի ա-
ղերը եւ «ֆոսֆատ»ները:

Կատարեալ է ա՛յն սնունդը որ ինքնին կըր-
նայ կեանքը պահպանել: Այսպիսի սնունդ մը
պէտք է որ պատշաճ քանակութեամբ իր մէջ
պարունակէ ջուր, ազոթ, թթուածին եւ հանքա-
յին նիւթեր:

Արդ՝ մօին 4/5 ջուր է. ազոթը չափաւոր
քանակութեամբ կը գտնուի: Միտք կատարեալ
սնունդ չէ. քանի որ ճարպէ զուրկ ըլլալով, «չն-
շառական» սնունդ չի պարունակեր:

Ընդհակառակը՝ կաթն ու հաւկիթը՝ իրենց
մէջ կեանքի անհրաժեշտ նիւթերը պարունակե-
լով՝ կատարեալ սնունդներ են:

Հապա ի՞նչ ըսենք արմտիքներուն, գարիին,
ցորենին, եգիպտացորենին, լուբիային, ոսպին
եւ մանուսանդ իւղալից պտուղներուն (նուշ եւ
ընկոյզ) համար, որոնց սնուցիչ կարողութիւնն
անկարելի է երեւակայել: Այս նիւթերը՝ որ հան-
քային եւ շնչառական նիւթերով լի են եւ մա-
նուսանդ «ասիտ ֆոսֆօսիք» կը պարունակեն,
սննդառութեան հիմերը կը կազմեն:

Ամենէն գեղեցիկ եւ ամենէն կարգի ազդե-
րը միս չեն ուտեր:

Հայաթերք

ՅՈՐԴՈՐԱԿ

ԱՌ ՍԻՐՈՒՆ

Դու էիր որ միշտ կրսէիր. «Ես զինքն շատ կը
սիրեմ,
Կեանքս հոգիս անոր համար վրայ տալու պատ-
րաստ եմ».
Իսկ նա ասունց փոխարէն քեզ կը լսէր անխնայ.
Ասանկները պէտք է ասել աշխարհի մէջ որ որ
կայ.

Այլ բաժնուէ՛, խնայէ քեզ, ո՛վ դու անխորժ պա-
տանի.
Ասանկներուն քովը երբեք ճշմարիտ սէրը գործ
չունի.
Քեզ պէս անմեղ միամիտի մը վրայ նա միշտ ծի-
ծաղի.
Ըսելով թէ՛ «այս անգամ ալ ալոր փրկէն քրո-
նեցի».

Այլ հոտ կեցիր, քանզի ան որ կը յարգէիր մի-
այնակ.
Կը պաշտէիր, կերպէիր, զիջէր ցորեկ շարունակ.
Քեզի համար նա ալ չի կայ, ալ ուրիշի հա-
մար կայ.
Անունց համար՝ որ զինքն դեռ շատ չեն ճանչցած
խաչ պկայ.
Զակազիկ ԹՄԲՈՒԿ

Ծ Ի Ծ Ա Ղ

Վարժարանի մը մէջ Անգլիէի բնի դաստառուն
ի ղուր կաշխատէր Ի գիրն ալ կարգացնել աշա-
կերտաց. ու վերջապէս բարկանալով, անոնցմէ
մէկը իր մօտ կանչելով կը հրամայէ տախտակին
վրայ Ի գիրը գրել ու յետոյ կարգալ. Տղան պա-
րապ տեղը կը չարչարուի. բայց երբ դաստառուն
յանկարծակի կից մը կուտայ անոր կրնակին,
ցաւէն՝ երկայն ալ մը կը պոռայ.

— Ա՛հ, կըսէ դաստառուն, վերջապէս յաջո-
ղեցայ բուն ձայնը հանել տալ.

Գիւլի մը քարոզիչը կիրակի առաւոյ մը իր
փոքրաւորին կը հրամայէ երթալ մօտակայ ճա-

շարանապետ Պ. Դաւիթին ապսպրել որ իրեն ցո-
րեկուան համար քիչ մը իշկեմպէ յօսպասի պա-
հէ. Փոքրաւորը կը փութայ այս հրամանը կա-
տարել:

Ճաշու գրքին ընթերցումէն վերջը հայրսուր-
բը քարոզի կելլէ. այն միջոցին փոքրաւորն ալ
նստած տեղը կը մրաբէր. երբ հայրսուրբը քա-
լողին մէջ հետեւեալ խօսքերը պոռաւով կըսէ.
«Գիտէ՞ք, ի՞նչ պատասխանեց բարի թագաւորն
Դաւիթ, ի՞նչ պատասխանեց» փոքրաւորը այս
ձայնէն ընդոտտ արթննալով կը գոչէ.

— Հայրսուրբ, ըսաւ որ իշկեմպէ յօսպասիւն
հատեր է.



Իւրի հիսապ տէրսինտէ.

— Յէօյլէ պագալըմ Պ. Գէորգ, 14 էլմայը
միւսալթա իւզըն (հաւատարապէս) 13 քիշիյէ
թէվլի իտէպիլի՞րմիսին.

— Էվլէթ.

— Նասըլ.

— 13 էլմայը վերիբիմ 13 քիշիյէ, 1 թա-
նէսինի տէ պէն եէրիմ.

Զիւպպէնին պիրի պիր քէօյտէն կէշէրքէն,
քէնտի իշիյէ մէշղուլ պիր քէօյլիւյէ եագլաշա-
րագ, պիր թագըմ լիւղումսըզ սիւվալլէր իտէր.
քէօյլիւ իտէ ճէվապ վէրմէք իսթէմէզ. Պունուն
իւզէրինէ պիլիմ վէվլէք հիտտէթլէնիպ տէր քի.
— Կէօրիւնիւր քի պու քէօյտէ էշէքլէր իւ-
քեան իտէր.

Գէօյլիւ. — Խայըր, միւսիւ. կերչի քէօյիւ-
միլլէ չօգ էշէքլէր կէլիլ իտէ տէ՛ տուրմայըպ կէ-
շիպ կիտէրլէր. նասըլ քի շիմտի սիլ տէ էօյլէ
իտէճէքսինիլ

Գաթիլին պիրիւնի առմագ իշիւն տար աղա.
ճընա եագըն կէօթիւրտիւքլէրինտէ՛ նիլամէն
պէրապէրինտէ պուլունան փափազ՝ գաթիլէ խի-
թապէն — Ճէսարէթիլի օլ, էվլատըմ, պէնիլ պէ.

չիրէ օլան պօրճունու էօտէյէճէք տաղըգան կէլ-
միշ տիր .

Գաթիլ — էօլլէ իսէ շու տաղըգատա ժաշիք
իլան իտէրիմ .

Իւշ տէֆա տուլ գալժըշ օլան զէնկին պիր
Գալսէրլիյէ՝ ահպապտան պիրի՝ քէնտի թանը-
տըղը զէնկին վէ տիւպէր պիր տուլ գատըն իլէ
տէօրտիւնճիւ տէֆա օլարազ էվլէմէյի թէքլիֆ
իտէր .

Գալսէրլի գաթ իսէ շու ճէվապը վէրիւր .

— Պիլատէր, թէքլիֆինիզի մէմնունէն գա-
պուլ իտէրիմ, հաթտա՝ թրախօմտըղ պիլէ էվ-
լէնէպիլիլիմ իսէ տէ՝ կէօզիւմ գօրգմուշ օլտու-
ղունտան, էօլմէյէճէինէ տաիր պանա պիր մէօլս-
թէպէր քէֆիլ կէօսթէրմէլի տիր .

ՊԻԼՄԷՃԷ

Կիւմիւշտէն պիր գալէա կէօրտիւմ,
Հըֆը օլմուշ տը անտէ ապ,
Վուրտու շէմա շուլէսինի,
Անիտէ էյլէտի խարապ .

Իլք հալլ իտէնէ պիր գօմէտի տէֆթէրի վէ-
րիլէճէք տիր .

ԱԶԴ

Արեւելեան համադաւ կերակորներ, մաֆու-
թիւն եւ գիներու յարստորութիւն .

— Քաղաքիս Մէնշիէի հրապարակը Սէյֆէտտին
պէյ բասաթին մէջ՝ Կարապետ Տիրհէմճեանի Ա-
րեւելեան ճաշարանը՝ վերջերս կրած նորանոր
փոփոխութիւններով կատարելագործուած է .

Արեւելեան համադամ կերակուրներէ ախոր-
ժող փափկաճաշակներուն կը յանձնարարենք սոյն
ճաշարանը որ ամեն կերպով կը մրցի նմանօրի-
նակ հաստատութիւններու հետ .

Եւրոպացիք իրենց ճաշարանները կը հո-
գան, պէտք է մենք ալ մերինները հոգանք .

ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

«Հայելի»ի սպարանին մէջ դիւրամասշտի գնով
կը սպագրուին առեւտրական տներու համար
աւելն յեղուէ՝ Բարիզեան չերչին դրոքեւալք հե-
սաֆրաշարժ, պասկերազարդ եւ գունաւոր փոփ-
րիկ ազդարարութիւններ. կը սպագրուին նաեւ աշ-
ցեւոս, հասցեսոմ, հարսանեկան հրապարակ
մահազդ, նամակագրութիւն, պահարան, տոմար . եւն
Ուրիշ ֆաշաֆներէ եղած յսկանարարութիւն
ալ փութով կը կատարուին .

ՅԱԿՈԲ ԴԱՐԱԿԷՕԶԵՍՆ

Սուգ-էշ-Արքարիւն

Կը ծանուցանէ իր յարգոյ յաճախորդաց թէ
ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի եւս յաշկապէս
քերել տուած է Զինական, Հնդկական եւ Սէյրա-
նի ընտիր եւ հոստէս թէյեր, որոնց գործածութիւ-
նը ներկայ եղանակիս մէջ շատ օգտաւար է .

Կը պաճատէ նաեւ մազի համար ընտիր ներ-
կեր աւելն գոյնէ . Գիները յախաւոր .

Հետեւեալ գիրքերը կը ծխաւորին Տիւր Կա-
րապէս Աստուածատի ֆոյ . Եէրիֆ բաշա .

Փիլիկ Աղբօր Հարսնիք	որշ. ողջ
Այիւնէի Լէքաշիք, հալսաւ եւ	" 1.5 "
Քրֆարաւ գուարձալիֆներ	8 " "
Գրպանի Երազական .	50 սնդակ
Գալանճ Գօճա, գօլէսի	20 փոյ
Մահմուդիյի Միսֆեամաքը	20 "

ԱՇՈՏ ՓԱԼԱԵԱՆ

Տպագրական աւելն տեսակ գործերու կաշուա-
նիս, փորագրիչ, թէ տախի եւ թէ պղինձի վրայ,
կը պատրաստուին նաեւ պաճատականական կնիք-
ներ՝ մեծադէ եւ ֆաւորէ .

Աղեֆասանդրիս, Փրակ փողոց թիւ 22